ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հունիսի 2020 թվականի N 83 - Ա

«ԱՇՈՑՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 27-ի թիվ 28-Ա որոշումը, **որոշում եմ՝**

1. «Աշոցքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, նախադպրոցական կրթություն կազմակերպելու նպատակով, անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ, տրամադրել Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 1-ին փողոց, թիվ 12 հասցեում գտնվող, մանկապարտեզի շենք, շինություններն ու դրանց պահպանման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական՝ N22102019-08-0045)՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-686-րդ հոդվածների համաձայն «Աշոցքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել գույքի անհատույց օգտագործման անժամկետ պայմանագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի հունիսի 1
գյուղ Աշոցք

Հավելված
Հայաստանի Հանրապետության *Շիրակի մարզի*
Աշոցք համայնքի ղեկավարի 2020 թվականի
հունիսի 1-ի N 83-Ա որոշման

«Աշոցքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ, տրամադրվող գույք (շենք, շինություններ, հողամաս)

Հ/Հ	Անվանում (տեսակ)	Կադաստրային ծածկագիր	Մակերես
1	Հողամաս	08-015-0022-0010	1,05901 հեկտար
2	Մանկապարտեզ (շենք)	08-015-0022-0010-001	1856,53 քառակուսի մետր
3	Պարիսպ	08-015-0022-0010-003	10,24 քառակուսի մետր, 22,52 խորանարդ մետր
4	Պարիսպ	08-015-0022-0010-004	1,37 քառակուսի մետր, 2,6 խորանարդ մետր
5	Պարիսպ	08-015-0022-0010-005	0,9 քառակուսի մետր, 1,71 խորանարդ մետր
6	Պարիսպ	08-015-0022-0010-006	0,9 քառակուսի մետր, 1,71 խորանարդ մետր
7	Պարիսպ	08-015-0022-0010-007	0,9 քառակուսի մետր, 1,71 խորանարդ մետր
8	Պարիսպ	08-015-0022-0010-002	23,08 քառակուսի մետր, 50,77 խորանարդ մետր
9	Պարիսպ	08-015-0022-0010-008	0,91 քառակուսի մետր, 1,72 խորանարդ մետր
10	Ինքնակամ շինություն	-	23,31 քառակուսի մետր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245) 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հունիսի 2020 թվականի N 84-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով և հիմք ընդունելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1460 հրամանը, ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի աղետների ռիսկի կառավարման 2020 պլանը՝ համաձայն NN 1-6 հավելվածների:
2. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանի N 6 հավելվածով նախատեսված՝ նվազագույնը երեք միջոցառում իրականացնելու դեպքում աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի հունիսի 3
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հունիսի 2020 թվականի N 85-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՅԿՈՒՇ ԵՂՈՅԱՆԻՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 64-Ն որոշման հավելված 1-ի 7-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերի «ա» պարբերության, ***որոշում եմ.***

Անհատ ձեռնարկատեր Հայկուշ Եղոյանին (ՀՎՀՀ՝ 57333888, պետական ռեգիստրի գրանցման համարը՝ 63.1043513/2018-10-30, իրավաբանական հասցեն՝ գյուղ Աշոցք 4 փողոց 10/1, ընդհանուր մակերեսը՝ 25 քառակուսի մետր) 2020 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակների համար տալ ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի հունիսի 5
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հունիսի 2020 թվականի N 86-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՇՈՏ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ, 3-ՐԴ, 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 64-Ն որոշման հավելված 1-ի 7-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերի «ա» պարբերության, ***որոշում եմ.***

Անհատ ձեռնարկատեր Աշոտ Գասպարյանին (ՀՎՀՀ՝ 60504562, պետական ռեգիստրի գրանցման համարը՝ 63.00161/2005-07-30, իրավաբանական հասցեն՝ գյուղ Մեծ Սեպասար փողոց 1, փակուղի 4, 2 ընդհանուր մակերեսը՝ 25 քառակուսի մետր) 2020 թվականի 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակների համար տալ ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի հունիսի 5
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հունիսի 2020 թվականի N 87-Ա

<<ԱՍԳԱՆԱՍ ԲԵՐՆԵՑՅԱՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 64-Ն որոշման հավելված 1-ի 4-րդ կետի, ***որոշում եմ.***

«Ասգանաս Բերնեցյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (ՀՎՀՀ՝ 05540721, պետական ռեգիստրի գրանցման համարը՝ 29.110.78625/2013-10-15, իրավաբանական հասցեն՝ քաղաք Գյումրի շինարարների փողոց 33) 2020 թվականի համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Մեծ Սեպասար բնակավայրի տարածքում տալ սեղմված բնական գազի վաճառքի թույլտվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի հունիսի 5
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հունիսի 2020 թվականի N 88-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով **որոշում եմ.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2020 թվականի բյուջեի հաստատված եռամսյակային համամասնություններում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. «Համայքի բյուջեի եկամուտները» հատված 1-ի տող 1111, «Գույքահարկ շենքերի և շինությունների համար» 2-րդ եռամսյակում նախատեսված «500.0» թիվը փոխարինել «650.0» թվով:
2. «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման» հատված 2-ի բաժին 01, խումբ 6, դաս 1 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ», 4239 հոդվածով 2-րդ եռամսյակում նախատեսված «600.0» թիվը փոխարինել «750.0» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի հունիսի 9
գյուղ Աշոցք